

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ
ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ԳՊՀ դասախոս

Կառավարման և ֆինանսների ամբիոն, ասպիրանտ

էլվիստ՝ kor.gevorgyan@gmail.com

Արդի աշխարհում շուկայական տնտեսության կարևոր բաղադրիչ է ձեռնարկատիրությունը (հատկապես փոքր և միջին), որը պայմանավորված է վերջինիս սոցիալ-տնտեսական նշանակությամբ:

Ձեռնարկատիրության, ձեռներեցի մասին իրենց գիտական աշխատություններում դեռևս 18-19-րդ դարերում անդրադարձել են մի շարք տնտեսագետներ, որոնց տեսակետները չեն կորցրել իրենց արդիականությունը նաև մեր օրերում, չնայած ձեռնարկատիրությունը 21-րդ դարում թևակոխել է զարգացման նոր փուլ,

Ձեռնարկատիրության էությունը բաց տնտեսության զարգացմանը, կապիտալի ներմուծման և արտահանման բարելավմանը նպաստելն է: Ձեռնարկատիրությունը սրբեղծում է համակարգման մեխանիզմ, մշակում է շուկայի զարգացման ռազմավարություն, իրականացնում է ձեռնարկությունների միջև շփում: Ձեռնարկատիրության հիմնական նշանը ընկերության կամ տնտեսվարող սուբյեկտների անկախությունն է:

Ձեռնարկատիրության հիմնական խնդիրը ընկերության կառավարումն է՝ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և գործընթացի արտադրական կազմակերպման պայմանով: Ձեռնարկատիրության էությունը կարող է որոշվել նաև այն փաստով, որ յուրաքանչյուր ձեռնարկատեր պարասխանավորություն է կրում իր գործունեության վերջնական արդյունքի համար: Սեփական ձեռնարկատիրական գործունեության բարելավումը և զարգացումը հանդիսանում են տնտեսական հաջողության հասնելու և արտադրության բարձր աճի տեմպերի առաջնային պայման:

Սեփական գործը սկսելու որոշում կայացնող անձի կյանքը լի է հույսերով, հիասթափությամբ, անհանգստությամբ և քրտնաջան աշխատանքով: Յուրաքանչյուր ձեռնարկության սրբեղծմանը նախորդում է ապրելակերպը կտրուկ փոխելու և ձեռնարկատեր դառնալու վերաբերյալ որոշման կայացման գործընթացը: Յուրաքանչյուր այդպիսի որոշում ընդունվում է՝ հաշվի առնելով մրցակցային իրավիճակը և դրա առանձնահատկությունները:

Քանայի բառեր՝ ձեռնարկատիրություն, փոքր և միջին ձեռնարկատիրություն (ՓՄՁ), ձեռնարկատեր, նոր ձեռնարկության սպեղծում, ձեռնարկատեր դառնալու որոշման կայացում:

Առայսօր «ձեռնարկատեր» հասկացության հստակ և համընդհանուր ընդունելի սահմանում չկա, ուստի դիտարկենք «ձեռնարկատեր» կամ, ինչպես նախկինում էին անվանում, «էնթերեյրենյոր» («entrepreneur» բառն առաջացել է ֆրանսերենից և բառացի նշանակում է «միջնորդ») հասկացությունների պատմական զարգացումը: Այսպես՝

- Միջնադարում ձեռնարկատեր էր համարվում շքերթերի և երաժշտական ներկայացումների կազմակերպիչը, ինչպես նաև այն անձը, որը պատասխանատու էր մեծամասշտաբ շինարարության կամ արտադրական ծրագրերի համար:
- 17-րդ դարում ձեռնարկատեր էր այն անձը, որը պետության հետ նախօրոք պայմանավորված արժեքով պայմանագիր էր կնքում՝ իր վրա վերցնելով պայմանագրի կատարման ամբողջ ֆինանսական պատասխանատվությունը, սակայն ավելի քիչ արժեքով պարտավորությունները կատարելու դեպքում ավելցուկը կարող էր պահել իրեն:
- Ըստ XVIII դարի սկզբի տնտեսագետ Ռիչարդ Կանտիլլոնի (Richard Cantillon)՝ ձեռնարկատերը ռիսկի պայմաններում գործող անձն է, կապիտալի տրամադրմանը գործառույթը տարբերվում է ձեռնարկատիրական գործառույթից:
- Ըստ XVIII դարի վերջի ֆրանսիացի տնտեսագետ Բոդոյի (Beaudeau)՝ ձեռնարկատերը ձեռնարկվող գործի համար պատասխանատվություն կրող անձն է, որը պլանավորում, վերահսկում, կազմակերպում և տնօրինում է ձեռնարկությունը:
- 1803 թվականին ֆրանսիացի տնտեսագետ և դասական դպրոցի ներկայացուցիչ Ժան Բատիստ Սեյը (Jean Baptiste Say) սահմանել է,

¹ Robert Hisrich. Entrepreneurship and Intrapreneurship: Methods for Creating New Companies That Have an Impact on the Economic Renaissance of an Area. - In: Entrepreneurship, Intrapreneurship and Venture Capital, ed. Robert D. Hisrich, Lexington, Mass., Lexington Books, 1986, p. 96.



որ կապիտալից եկամուտը տարբերվում է ձեռնարկատիրական եկամտից:

- 1876 թվականին ամերիկացի տնտեսագետ Ֆրենսիս Ամասա Վոքերը (Francis Amasa Walker) նշել է, որ անհրաժեշտ է տարբերել նրանց, ովքեր, կապիտալ տրամադրելով, ստանում են տոկոսներ դրա դիմաց, և նրանց, ովքեր եկամուտ են ստանում իրենց կազմակերպչական ունակությունների շնորհիվ:
- XX դարասկզբի ազդեցիկ տնտեսագետներից մեկը՝ ավստրիացի Ջոզեֆ Շումպետերը (Joseph Schumpeter) 1934 թվականին ձեռնարկատիրոջը համարում է նորարար, որը մշակում է նոր տեխնոլոգիաներ:
- Ամերիկացի տնտեսագետ Ռոբերտ Հիզրիչը (Robert Hisrich) 1955 թվականին ձեռնարկատիրությունը սահմանել է որպես արժեքավոր որևէ նոր բանի ստեղծման գործընթաց, իսկ ձեռնարկատիրոջը՝ որպես դրա համար ամբողջ անհրաժեշտ ժամանակը և ուժերը ծախսող անձնավորություն, ով իր պատասխանատվության տակ է վերցնում բոլոր ֆինանսական, հոգեբանական և սոցիալական ռիսկերը՝ որպես պարգևատրում ստանալով գումար և բավարարվածություն:
- Ամերիկացի հոգեբան Դեյվիդ Մակլելանդը (David McClelland) 1961 թվականին ձեռնարկատիրոջը սահմանել է որպես եռանդուն անձնավորություն, որը գործում է չափավոր ռիսկի պայմաններում:
- Ավստրիական ծագմամբ ամերիկացի տնտեսագետ և մենեջմենթի ազդեցիկ տեսաբաններից Պիտեր Դրուկերը (Peter Drucker) 1964 թվականին ձեռնարկատիրոջը սահմանել է որպես ցանկացած հնարավորություն առավելագույնս շահավետ օգտագործող անձ:
- Օհայոյի պետական համալսարանի պրոֆեսոր Ալբերտ Շապիրոն (Albert Shapiro) 1975 թվականին ձեռնարկատիրոջը սահմանել է որպես սոցիալ-տնտեսական մեխանիզմներ կազմակերպող և նախաձեռնություն ցուցաբերող անձն, որը, գործելով ռիսկի պայմաններում, կրում է հնարավոր անհաջողության ամբողջական պատասխանատվությունը:
- Ըստ Վաշինգտոնի համալսարանի մենեջմենթի անվանի պրոֆեսոր ամերիկացի Կառլ Վեսպերի (Karl Vesper) 1980 թվականի հրապար-



րակման՝ ձեռնարկատերը տարբեր կերպ է ընկալվում տնտեսագետի, հոգեբանի, այլ ձեռնարկատերերի և քաղաքագետների կողմից:

- Ամերիկացի ձեռնարկատեր և նորարար Գիֆորդ Պինշոտը (Gifford Pinchot) 1983 թվականին տարբերակել է «էնթրեպրենյոր» և «անթրեպրենյոր» հասկացությունները՝ սահմանելով, որ առաջինը գործում է արդեն իսկ գոյություն ունեցող ձեռնարկության պայմաններում, իսկ ահա երկրորդը ձեռնարկատեր է, որը ստեղծում է նոր ձեռնարկություն:

Դիտարկենք ձեռնարկատիրական գործունեության և ձեռներեցների դերի բացահայտման վերաբերյալ առանձին տնտեսագետ-գիտնականների բնորոշումները և սահմանումները:

Միջնադարում ձեռնարկատեր համարվող անձը որևէ ռիսկ չէր կրում, այլ միայն ղեկավարում էր նախագծի իրականացման բոլոր աշխատանքները՝ օգտագործելով իրեն տրամադրված ռեսուրսները: Միջնադարում այսպիսի ձեռնարկատեր էին, որպես կանոն, հոգևոր անձիք, քանի որ հենց իրենց էր հանձնարարվում այնպիսի լայնամասշտաբ ճարտարապետական շինարարական աշխատանքների իրականացման ղեկավարումը, ինչպիսիք էին ամրոցների, հասարակական կառույցների, եկեղեցիների կառուցումը:

Ձեռնարկատիրական ռիսկ հասկացությունը զարգացում ունեցավ XVII դարում, երբ ձեռնարկատեր սկսեց համարվել այն անձը, որը պետության հետ պայմանագիր էր կնքում որևէ աշխատանքի իրականացման կամ որոշակի ապրանքների մատակարարման նպատակով: Ամերիկյան գիտնականներ Ռ. Հիգրիջի և Մ. Փիթերսի կարծիքով՝ ձեռներեցը այն անձն է, որը պայմանագիր է կնքել պետության հետ, որի արժեքը համաձայնեցվել է նախապես²: Այդ անձը իր վրա է վերցնում պայմանագրի պայմանների կատարման ամբողջ ֆինանսական պատասխանատվությունը, սակայն եթե նրան հաջողվում է տեղավորվել համաձայնեցվածից ավելի փոքր գումարի մեջ, ապա տարբերությունը նա սեփականացնում է:

XVIII դարի հայտնի անգլիացի տնտեսագետ Ռիչարդ Կանտիլյոնը ստեղծեց ձեռներեցության առաջին հայեցակարգերից մեկը, և որոշ հետազոտողների կարծիքով համարվում է «ձեռներեց» տերմինի ստեղծողը: Ըստ

² Хизрич Р., Питерс М. "Предпринимательство" Москва 1991г., стр. 20

Կանտիլյոնի՝ ձեռներեցը ռիսկի պայմաններում գործող անձն է, քանի որ առևտրականները, ֆերմերները, արհեստավորները և այլ մանր սեփականատերեր գնում են արդեն իսկ հայտնի արժեքով, սակայն վաճառում են անհայտ գնով, այսինքն՝ գործում են ռիսկի պայմաններում: Կարելի է պնդել, որ Ռ. Կանտիլյոնն այն մոտեցման հիմնադիրն է, որը բնորոշում է ձեռնարկատիրոջը որպես տնտեսավարող սուբյեկտ, որն իր վրա է վերցնում տարբեր ռիսկեր կրելու պատասխանատվությունը տնտեսական գործունեության արդյունքի անորոշության պատճառով:

Ձեռնարկատիրական գործունեության տեսության մշակման մեջ նշանակալի ներդրում է կատարել Ա. Սմիթը (1723-1790): Ըստ Ա. Սմիթի՝ ձեռնարկատերը կապիտալի սեփականատեր է, որը հանուն որևէ առևտրային գաղափարի ներդրման և եկամտի ստացման դիմում է տնտեսական ռիսկի: Ըստ նույն գիտնականի՝ որպեսզի մասնավոր ձեռնարկությունը օգտակար լինի հասարակությանը, անհրաժեշտ է երկու կարևորագույն պայման՝ 1) ձեռնարկատերը պետք է անձնական շահ ունենա ձեռնարկությունից, 2) մրցակցությունը պետք է պահի նրան որոշակի սահմաններում:

Ուշագրավ է Ժ. Բոդոյի այն կարծիքը, որ ձեռնարկատերը անձ է, ով պատասխանատվություն է կրում ձեռնարկած գործի համար. ձեռնարկությունում պլանավորում, հսկում, կազմակերպում է աշխատանքը և հանդիսանում է նրա սեփականատերը³: Այսինքն՝ այն անձն է, ով համատեղում է կապիտալի սեփականատիրոջ և կառավարողի գործառույթները: Ընդ որում Ժ. Բոդոն ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար հատուկ մատնանշում էր կապիտալիստի՝ նոր գիտելիքներ ստանալու անհրաժեշտությունը:

Ձեռնարկատիրական գործունեության տեսության կայացման մեջ նշանակալի ներդրում է կատարել ֆրանսիացի գիտնական Ժան Բատիստ Սեյը (1767-1832), որը, ուսումնասիրելով Ա. Սմիթի «Ազգերի հարստությունը» հիմնարար աշխատությունը, շարադրել է ձեռնարկատիրական գործունեության էության և գործառույթների վերաբերյալ իր տեսակետը. նա համարում էր, որ ձեռնարկատերը տնտեսական գործակալ է, որը համադրում է արտադրության գործոնները, տեղափոխում է ռեսուրսները ցածր արտադրո-

³ Багиев Г. И., Асаул А. И., Организация предпринимательской деятельности, Учебное пособие/ Под общей ред. проф. Г. И. Багиева

ղականության և եկամտաբերության ոլորտներից դեպի այն ոլորտները, որտեղ դրանք կարող են տալ առավելագույն արդյունք (եկամուտ, շահույթ): Գիտնականը մատնանշում էր ձեռնարկատիրական գործունեության ակտիվ, նորարարական բնույթը՝ պայմանավորված արտադրական գործոնների նոր համադրությունների ստեղծման անհրաժեշտությամբ⁴:

XVIII դարում տեղի ունեցավ հասկացությունների տարբերակում. կապիտալի սեփականատերեր սկսեցին համարել այն անձանց, ովքեր գործարկում են այդ կապիտալը: Այլ խոսքով, սկսեցին տարբերակել կապիտալի տրամադրման գործառույթը (ժամանակակից վենչուրային կապիտալի զարգացման հիմնաքարը) և ձեռնարկատիրական գործառույթը: Այսպիսի տարբերակման անհրաժեշտության առաջացման պատճառներից մեկը արդյունաբերական հեղաշրջումն էր, որը կարևորեց ձեռնարկատերերի և կապիտալի սեփականատերերի դերը տնտեսական զարգացման մեջ:

Ինչպես երևում է, XIX դարի վերջում և XX դարի սկզբում ձեռնարկատերերին հաճախ նույնականացնում էին ձեռնարկությունների ղեկավարների՝ կառավարիչների հետ, և հիմնականում ուշադրություն էին դարձնում նրանց գործունեության տնտեսական հայեցակետերի վրա. «Եթե փորձել հակիրճ սահմանել ձեռնարկատեր հասկացությունը, ապա ձեռնարկատերը այն մարդն է, ով ստեղծում է ձեռնարկությունը և կառավարում է այն անձնական շահույթի ստացման նպատակով: Արտադրական գործընթացում հումքի և նյութերի, հողի, վարձած աշխատակիցների աշխատանքի դիմաց վճարների և ներգրավված կապիտալի համար նա վճարում է ընթացիկ գներով: Նա գործի մեջ է դնում ձեռնարկության պլանավորման, կազմակերպման և կառավարման ոլորտում իր սեփական գաղափարները, գիտելիքները և հմտությունները: Նա պատասխանատվություն է կրում հնարավոր կորուստների համար, անգամ եթե այդ կորուստներն իր մեղքով չեն, այլ ուղղակի հանկարծակի ստեղծված անբարենպաստ հանգամանքների արդյունք են, սակայն եթե հանգամանքները փոխվեն դրական կերպով, ապա նա կստանա դրա հետ կապված ամբողջ շահույթը: Ձեռնարկատիրոջ անձնական եկամուտը որոշվում է, որպես իր ձեռնարկության եկամուտների և ծախսերի միջև տարբերություն»⁵: Այս սահմանման ակնհայտ մարմնավորումներից

⁴ Лануца М., Предпринимательство, ИИФРА, М., 2004 г., стр. 6-7

⁵ Richard T. Ely, Ralph H. Hess, Outlines of Economics, 6th ed. New York, Macmillan, 1937, p. 488.

մեկը կարելի է համարել էնդրյու Կարնեգիին, որը ոչինչ չի հայտնագործել, սակայն կարողանում էր նկատել նոր գաղափարները, զարգացնել դրանք և մարմնավորել արդյունավետ տեխնոլոգիաների և ապրանքների մեջ:

Արդեն XIXդ. սկզբում տնտեսագիտական աշխատություններում առանձնացվում են ձեռնարկատիրական գործունեության տնտեսական, կազմակերպչական և հոգեբանական բնորոշիչները, որոնք հետագայում վերափոխվում են նրա հիմնական գործառույթների: Հենց XIXդ.-ում տնտեսագետ-գիտնականները մատնանշում են ձեռնարկատիրական գործունեության նորարարական բնույթը: Այս տեսակետը լայն կիրառում է ստացել XXդ., հատկապես նրա երկրորդ կեսին:

Ժամանակակից ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեն XVІІІ- XIXդդ. տնտեսագետ-գիտնականների այն եզրահանգումը, որ ձեռնարկատերը կապիտալի սեփականատեր է, սեփական գործի հիմնադիր, որը կառավարում է այն՝ հաճախ համատեղելով (հատկապես կապիտալի գործառնության սկզբնական փուլում) սեփականատիրոջ գործառույթը անձնական արտադրողական աշխատանքի հետ: Դասական տնտեսագիտական միտքը կերտողների աշխատություններում մատնանշված ձեռնարկատիրական գործունեության շարժիչ ուժը՝ եկամտի (շահույթի) ստացումը, ապրանքների արտադրության և սպառողների պահանջարկի բավարարման միջոցով կարելի է դիտարկել որպես ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր տնտեսական գործառույթի բացահայտման քայլ: Ժամանակակից ձեռնարկատերերի համար, որպես տնտեսական աճի պարտադիր պայման, հատկապես կարևորվում է ազգային տնտեսությունում եկամտի կապիտալիզացիայի անհրաժեշտության մասին դրույթը: Ոչ պակաս արդիական է ձեռնարկատիրոջ բնորոշումը որպես տնտեսավարող սուբյեկտ, որը իր վրա է վերցնում բոլոր տեսակի ռիսկերը, որոնք կարող են առաջ գալ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելիս այդ գործունեության ելքի անորոշության պատճառով:

Այսպիսով, դասական տնտեսագիտական տեսության կողմնակիցները առաջինը բացահայտեցին ձեռնարկատիրական գործունեության բնորոշիչներից մեկը՝ այդ գործունեության ռիսկային բնույթը: Ուստի ձեռնարկատիրական նախագծերի իրականացման ժամանակ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է նախատեսել այդ ռիսկերը, նախապես մշակել դրանց հետևանքները կանխելու միջոցառումներ:

Միայն XX դարի կեսերին ձևավորվեց ձեռնարկատիրոջ՝ որպես նորարարի, ժամանակակից ընկալումը. «Ձեռնարկատիրոջ խնդիրը արտադրական եղանակի բարեփոխումը և հեղափոխումն է հայտնագործությունների ներգրավման միջոցով, իսկ առավել ընդհանրական իմաստով՝ նոր կամ հին, սակայն նոր մեթոդով ստեղծված, ապրանքների արտադրության համար տեխնոլոգիական հնարավորությունների կիրառման միջոցով՝ հումքի նոր աղբյուրի կամ պատրաստի արտադրանքի նոր շուկայի հայտնաբերման շնորհիվ՝ մինչև անգամ հնի վերակազմավորման և արդյունաբերության նոր ճյուղի ստեղծման շնորհիվ»⁶:

Այս սահմանման էությունը նորարարության և ընդհանրապես նորության ճանաչումն է որպես ձեռնարկատիրության անբաժանելի մաս: Իսկապես, նոր գաղափարների որոնումը և դրանց իրագործումը ձեռնարկատիրոջ համար ամենադժվար խնդիրներից մեկն է: Անհրաժեշտ է ոչ միայն ստեղծագործական մոտեցման և նոր լուծումներ գտնելու ունակություն, այլ նաև ստեղծված իրավիճակում գործող ուժերի դասավորվածության ընկալումը: Ամեն ինչ կարող է ծառայել որպես նոր գաղափար՝ նոր արտադրական ապրանքից մինչև նոր կազմակերպական կառուցվածք:

XX դարի վերջին տասնամյակներում ամենատարբեր մասնագիտությունների գիտնականները (տնտեսագետները, փիլիսոփաները, հոգեբանները, սոցիոլոգները և այլք) լուրջ ուշադրություն են դարձրել ձեռնարկատիրական գործունեության տեսության զարգացմանը, նրա հիմնական բնութագրերին, տնտեսական զարգացման գործընթացում ունեցած դերին: XX դարի երկրորդ կեսը արևմտյան երկրների մեծ մասում քաղաքակիրթ ձեռնարկատիրական գործունեության ձևավորման ժամանակաշրջան էր, հետևաբար այդ արդիական խնդիրն են անդրադառնում գիտնականները: Նրանք հաշվի են առնում այն հանգամանքը, որ զարգացած շուկայական տնտեսության մեջ տնային տնտեսությունների և պետության կողքին ձեռնարկատիրական կազմակերպությունները հանդիսանում են կարևորագույն տնտեսվարող սուբյեկտներ: Դիտարկենք այնպիսի ակնառու տնտեսագետ գիտնականների տեսակետները ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ, ինչպիսիք են Ֆ. Հայեկը, Յ. Շումպետերը և Պ. Դրաքերը:

⁶ Joseph Shumpeter. Can Capitalism survive? New York, Harper & Row, 1952, p. 72.

Ավստրիացի տնտեսագետ Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկի կարծիքով՝ ձեռնարկատերը՝ որպես տնտեսավարող սուբյեկտ, բնորոշվում է հատուկ վարքով, եկամուտ ստանալու այնպիսի հնարավորություններ գտնելու ձգտումով, որոնք դեռ չեն նկատվել մյուս տնտեսավարող սուբյեկտների կողմից⁷:

Մեկ այլ գիտնական, ավստրիացի տնտեսագետ Յոզեֆ Ալոիզ Շումպետերի աշխատություններում շարադրված են ձեռնարկատիրական գործունեության տեսության և պրակտիկայի հիմնախնդիրները, որոնց ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի արդի ձեռնարկատիրության համար: Այսպես, «Տնտեսական զարգացման տեսություն» վերտառությամբ իր հայտնի աշխատության մեջ նշանակալի հետաքրքրություն է ներկայացնում ձեռնարկատերերի էության, նրանց անհատական հատկանիշների, գործունեության դրդապատճառների ուսմունքը⁸: Յ. Շումպետերը ձեռնարկատեր է համարում ոչ միայն շուկայական տնտեսության «ինքնուրույն» տնտեսավարող սուբյեկտներին, այլ բոլոր նրանց, ովքեր իրականացնում են ձեռնարկատիրական գործունեության հիմնարար գործառույթը՝ արտադրության գործոնների նոր համադրումը:

Ձեռնարկատիրության տեսության մեջ նշանակալի ներդրում է կատարել ամերիկացի գիտնական, տնտեսագետ Փիթեր Ֆերդինանդ Դրաքերը: Գիտնականը խոսում է ձեռնարկատիրական հասարակության կարևորության մասին, որում նորարարությունը և ձեռնարկատիրական գործունեությունը կլինեն կայուն, կկրեն պարտադիր բնույթ: Դրանք կազմակերպություններում, տնտեսությունում, հասարակության մեջ պետք է դառնան անքակտելի, կենսական կարևոր գործունեություն⁹: Փ. Դրաքերը սահմանել է նաև ձեռնարկատիրական հասարակության անդամների առջև կանգնած առաջնային խնդիրը՝ անդադար ուսուցման և որակավորման բարձրացման անհրաժեշտությունը. ձեռնարկատիրական հասարակության անդամները չեն կարող առաջնորդվել այն պատկերացմամբ, որ երիտասարդ տարիքում ստացած գիտելիքները կբավարարեն նրանց ամբողջ կյանքի ընթացքում:

⁷ Предпринимательство в конце XX века, Под ред. А. А. Дынкина, А. Р. Стерлина, Москва, Наука, 1992г., стр. 34.

⁸ Шумпетер Й., Теория экономического развития, Москва, 1982 г., стр.184-194, 211-225.

⁹ Peter F. Drucker, "Innovation and Entrepreneurship", 2006.

Հայտնի ամերիկացի տնտեսագետներ Ռ. Հիգրիչը և Մ. Փիթերսը տալիս են ձեռնարկատիրական գործունեության ամենաընդգրկուն սահմանումներից մեկը, որը ներառում է ձեռնարկատիրական վարքի բոլոր կողմերը. «- Ձեռնարկատիրական գործունեությունը արժեք ունեցող ինչ-որ նոր բանի ստեղծման գործընթաց է, գործընթաց, որը պահանջում է ժամանակ և ուժ, ենթադրում է ֆինանսական, բարոյական և սոցիալական պատասխանատվության ստանձնում, գործընթաց, որը բերում է դրամական եկամուտ և ձեռքբերվածով անձնական բավարարվածություն»։ Այնուհետև հեղինակները գրում են, որ այն մարդու կյանքը, որը որոշում է սեփական գործ սկսել, լի է հույսերով, հիասթափություններով և քրտնաջան աշխատանքով¹⁰։ Ռ. Հիգրիչը տալիս է ձեռնարկատիրական գործունեության էության ամենակարճ սահմանումներից մեկը, այն է՝ արժեք ունեցող որևէ նոր բանի ստեղծման գործընթաց։

Ձեռնարկատիրական գործունեության էության վերաբերյալ որոշակի ուսումնասիրություններ են կատարել նաև ռուս տնտեսագետները, որոնց տեսակետները ևս որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։ Մանավորապես հետաքրքրական է Ա. Բուսիգինի տեսակետը, ըստ որի՝ ձեռնարկատիրական գործունեությունը դիտվում է որպես տնտեսական ակտիվության հատուկ տեսակ, շահույթ ստանալու նպատակաուղղված գործունեություն, և որը հիմնված է ինքնուրույն նախաձեռնության, պատասխանատվության ու նորարարական ձեռնարկատիրական գաղափարի վրա¹¹։ Մեկ այլ տնտեսագետի աշխատությունում ձեռնարկատիրական գործունեությունը սահմանվում է որպես ռեսուրսների ռացիոնալացման և շահավետ ներդրման նոր ոլորտների որոնում, արտադրության մեջ նոր համադրումների իրականացում, շարժ դեպի նոր շուկաներ, նոր ապրանքների ստեղծում¹²։

Ձեռնարկատիրական գործունեության էությանն են անդրադարձել նաև մի շարք հայրենական տնտեսագետներ։ Այսպես, Մ. Մելքումյանը սահմանում է ձեռնարկատիրական գործունեությունը որպես համալիր կատեգորիա, որտեղ միկրո և մակրո մակարդակներում կենտրոնացված են պետության և հասարակության սեփականատիրական, սոցիալական և այլ շահե-

¹⁰ Хизрич Р., Питерс М., Предпринимательство, или Как завести собственное дело и добиться успеха, Москва, 1991г., стр.11-50.

¹¹ Бусыгин А. "Предпринимательство", ИНФРА-М 1997, стр 15.

¹² Круглова Н. Ю. "Основа бизнеса", Москва 2003г., стр.53.

րը, որոնք իրագործվում են ձեռնարկատիրոջ կողմից ռեսուրսների այնպիսի համադրմամբ, որի դեպքում ապահովվում է ձեռնարկատիրական շահույթ¹³: Իր հերթին պրոֆեսոր Հ. Ղուշյանը նշում է, որ ապրանքի արտադրությունը կամ ծառայությունների մատուցումը պահանջում է բնական, գիտատեխնիկական, աշխատանքային և ինտելեկտուալ ռեսուրսների միավորում, սակայն միայն դրանց նոր համադրումների իրականացումը կարող է ձեռնարկատիրական գործունեություն համարվել¹⁴: Մեկ այլ սահմանման մեջ ձեռնարկատիրական գործունեությունը դիտարկվում է որպես շուկայական տնտեսության տնտեսական մեխանիզմների իրականացման ձևերից մեկը, որտեղ տնտեսվարող սուբյեկտները արտադրությունը իրականացնում են շուկայական մրցակցության պայմաններում՝ գործելով ինքնուրույն, շահույթ ստանալու նպատակով դիմելով տնտեսական ռիսկի:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը և հիմք ընդունելով նաև ՀՀ օրենսդրությունը՝ կարելի է ասել, որ «ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»¹⁵:

Ձեռնարկատիրության էությունը առավել լավ հասկանալու համար հարկավոր է ուսումնասիրել ձեռնարկատիրոջ վարքագիծը տարբեր տեսանկյուններից՝ տնտեսական, կառավարչական, անձնական: XX դարի հետազոտողները առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում ձեռնարկատիրոջ անձնական և սոցիալական բնութագրերին, ինչն իր արտահայտությունը գտավ հետևյալ դատողություններում.

➤ Ձեռնարկատիրոջ և ձեռնարկատիրության գրեթե բոլոր սահմանումներում նշվում է այնպիսի վարքագծի մասին, որը ներառում է առաջին հերթին նախաձեռնության տարր, երկրորդ՝ առկա ռեսուրսները և մրցակցային իրավիճակը շահավետ օգտագործելու նպատակով սոցիալ-տնտեսական մեխանիզմների կազմակերպում կամ վերակազմակերպում, երրորդ՝

¹³ Մելքունյան Մ. «Ձեռնարկատիրություն և ներդրումներ: Արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Երևան, Լոյս, 1998թ., էջ 10:

¹⁴ «Ձևոնկրեցի սեղանի գիրք» խմբ. խորհուրդ Հ.Ղուշյան, Գ.Կիրակոսյան, Ա.Մարկոսյան, Երևան, Տնտեսագետ, 1999թ., էջ 18:

¹⁵ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 2:

անհաջողության դեպքում պատասխանատվություն կրելու պարտավորություն, այսինքն՝ ռիսկի դիմելու պատրաստակամություն:

➤ Տեսեսագետի տեսանկյունից ձեռնարկատերն այն անձն է, ով ռեսուրսները, աշխատանքը, միջոցները և նյութերը միավորում է այնպես, որ իրենց ընդհանուր արժեքն աճում է: Միաժամանակ, նա փոփոխություններ է իրականացնում նորարարությունների միջոցով և վերափոխում սահմանված կարգը: Հոգեբանի տեսանկյունից ձեռնարկատերն այն անձն է, ով առաջնորդվում է որոշակի շարժառիթներով, օրինակ, կյանքում որևէ բանի հասնելու, որևէ նոր բան փորձելու, ինքնահաստատվելու կամ ինքնուրույնություն ստանալու ցանկությունը: Այլ ձեռնարկատերերի տեսանկյունից նա կարող է սպառնալիք ներկայացնել, լինել վտանգավոր մրցակից, կամ, ընդհակառակը, գործընկեր, մատակարար, գնորդ կամ պարզապես հետաքրքիր գաղափարներ ունեցող անձ, որտեղ դեմ չեք լինի ներդրումներ կատարել: Բաղաքական տնտեսագետի տեսանկյունից ձեռնարկատերը ոչ միայն ռեսուրսները բազմապատկող և կորուստները նվազեցնող, այլ նաև նոր աշխատատեղեր ստեղծող անձն է:¹⁶

➤ Ձեռնարկատիրությունը հարստություն ստեղծելու դինամիկ գործընթաց է: Հարստությունը ստեղծվում է նրանց կողմից, ովքեր ամենից շատ են վտանգում սեփական փողը, ունեցվածքը, կարիերան, ովքեր ժամանակ չեն խնայում սեփական գործը ստեղծելու համար, ովքեր գնորդին նոր ապրանք կամ ծառայություն են առաջարկում: Ընդ որում պարտադիր չէ, որ այդ ապրանքը կամ ծառայությունը բոլորովին նորը լինի: Գլխավորն այն է, որ ձեռնարկատերը՝ ծախսելով անհրաժեշտ միջոցներ և ներուժ, կարողանա դրանց նոր որակ հաղորդել, բարձրացնել արժեքը¹⁷:

Վերոնշյալ երեք սահմանումներից յուրաքանչյուրը ձեռնարկատեր հասկացությունը դիտարկում է տարբեր տեսանկյունից, սակայն դրանք բոլորը ներառում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են նորարարությունը, կազմակերպչական տաղանդը, ստեղծագործական միտքը, հարստության բազմապատկումը և ռիսկի դիմելու պատրաստակամությունը: Այնուամենայնիվ, վերոբերյալ բոլոր սահմանումները որոշակիորեն սահմանափակում են ձեռնարկատիրության ոլորտը, թեև իրականում ձեռնարկատերերը հանդի-

¹⁶ Karl Vesper, *New Venture Strategies*. Inglewood Cliffs, N. J., Prentice-Hall, 1980, p. 2.

¹⁷ Robert C. Ronstadt, *Entrepreneurship*. Dover, Mass., Lord Publishing Co., 1984, p. 28.

պում են բոլոր ոլորտներում՝ կրթություն, բժշկություն, գիտություն, իրավաբանություն, ճարտարապետություն, արտադրության, սոցիալական և բաշխման ոլորտներ: Այդուհանդերձ, գոյություն ունի մեկ այլ սահմանում, որն ընդգրկում է ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակները.

«Ձեռնարկատիրությունը արժեք ունեցող նորույթի ստեղծման գործընթաց է՝ ժամանակ և ուժ կլանող, որը ենթադրում է ֆինանսական, բարոյական և սոցիալական պատասխանատվության ստանձնում, գործընթաց, որն արդյունքում բերում է դրամական եկամուտ և ստացված ձեռքբերումից անձնական բավարարվածություն»¹⁸:

Սեփական գործը սկսելու որոշում կայացնող անձի կյանքը լի է հույսերով, հիասթափությամբ, անհանգստությամբ և քրտնաջան աշխատանքով: Միևնույն ժամանակ անհաջողություն կրելու հավանականությունը բավականին մեծ է պահանջարկի բացակայության, մրցակցության՝ չափից ավելի ուժեղ լինելու և անհրաժեշտ ֆինանսական աջակցություն չստանալու պատճառով: Բավականին բարձր է նաև սեփական ձեռնարկությունը ստեղծելու հետ կապված ֆինանսական և հուզական ռիսկը: Այդ դեպքում տրամաբանական հարց է առաջանում, թե ի՞նչն է մարդուն մղում դեպի ձեռնարկատիրության ուղի: Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է ուսումնասիրել ձեռնարկատեր դառնալու վերաբերյալ որոշման կայացման բուն գործընթացը:

Իսկապես նոր ձեռնարկությունները ստեղծվում են ցանկացած պայմաններում և իրավիճակում՝ անկախ տնտեսական հետընթացից, վարկերի բարձր տոկոսադրույքներից, անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունից, ապագայի անորոշությունից և ռիսկի բարձր մակարդակից: Յուրաքանչյուր ձեռնարկության ստեղծմանը նախորդում է տվյալ անձնավորության կողմից իր ապրելակերպը կտրուկ փոխելու և ձեռնարկատեր դառնալու վերաբերյալ որոշման կայացման գործընթացը: Յուրաքանչյուր այդպիսի որոշում ընդունվում է՝ հաշվի առնելով մրցակցային իրավիճակը, և յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Այնուամենայնիվ, կան որոշակի ընդհանրություններ. օրինակ՝ ենթադրում են մեկ կետից տեղաշարժ

¹⁸ Robert D. Hisrich, ed. *Entrepreneurship, Intrapreneurship, and Venture Capital: The Foundation of Economic Renaissance*. Lexington, Mass., Lexington Books, 1986.

դեպի այլ կետ. այլ խոսքերով ասած՝ արդեն իսկ սովորական դարձած ապրելակերպից հրաժարվելը հոգուտ սեփական գործը ստեղծելուն:

Աղյուսակ 1. Ձեռնարկատեր դառնալու որոշման կայացումը¹⁹

Հաստատված ապրելակերպի մերժում	Սեփական ձեռնարկության ստեղծում
Գործունեության ոլորտ	<i>Ցանկություն</i> 1. Ազգային մշակույթ 2. Տեղի ավանդույթներ 3. Ընտանիք 4. Դպրոց, ԲՈՒՀ 5. Ընկերներ
Իրավիճակի հարկադիր փոփոխություն	<i>Հնարավորություն</i> 1. Պետական աջակցություն 2. Մասնագիտական պատրաստվածություն 3. Մարքեթինգի ոլորտում փորձ 4. Սկզբնական կապիտալ 5. Առկա օրինակներ

Այսպիսով, սեփական գործը սկսելու որոշումը ընգրկում է հետևյալ 3 կարևոր քայլերը.

☝ Հրաժարվել նախկին կարիերայից և ապրելակերպը փոխելու պատրաստակամության դրսևորում,

☝ Համոզված լինել, որ սեփական գործն ունենալը հեղինակավոր և արժանի զբաղմունք է (ցանկություն),

☝ Վստահ լինել, որ այդպիսի բիզնես ստեղծելը միանգամայն իրատեսական է, քանի որ դրա համար առկա են բոլոր անհրաժեշտ ներքին և արտաքին նախադրյալները (հնարավորություն):

¹⁹ R. D. Hisrich, *Intrpreneurship and Intreprenurship: Methods for Creating New Companies That Have an Impact on the Economic Renaissance of an Area.* – In: *Intrpreneurship, Intraprcneurship and Venture Capital*, ed. R. D. Hisrich, Lexington, Mass., Lexington Books, 1986, p. 90.

Բոլոր վերոնշյալ քայլերը միշտ առկա են՝ անկախ այն բանից, թե ինչպիսի ձեռնարկություն է (տնային, նորարարական, վենչուրային և այլն) պատրաստվում ստեղծել ձեռնարկատերը:

Կարիերայից հրաժարվելու և ձեռնարկատեր դառնալու որոշման կայացմանը նպաստում են ձգողականության և վանողականության էֆեկտները: Մասնավորապես հաճախ ձեռնարկատեր դառնալու որոշման կայացումը կապված է այն հանգամանքի հետ, որ նախկին աշխատանքը ձեռնտու չէ այլևս (վանողականության էֆեկտ) կամ երբ սեփական գործը ստեղծելը գրավիչ է (ձգողականության էֆեկտ), հատկապես երբ դրա հետ կապված հետաքրքիր գաղափար է առաջանում: Այնուամենայնիվ, ձեռնարկատեր դառնալու հնարավորությունից բացի անհրաժեշտ է նաև ցանկության առկայություն: Ձեռնարկատիրության՝ որպես արժանի և հեղինակավոր գործունեության տեսակի վերաբերյալ պատկերացումները ձևավորվում են իրականացվող պետական քաղաքականության, տեղական ավանդույթների, ընտանիքի, դպրոցի և ընկերների ազդեցության արդյունքում: Տանկացած տեսակի օգնություն, ում կողմից էլ որ այն տրամադրվի՝ փոքր բիզնեսի զարգացումը խթանող կառավարություն, թե ծնողների կողմից բերված որևէ հայտնի և հաջողված ձեռնարկատիրոջ ճակատագրի վերաբերյալ օրինակ, չափազանց կարևոր է և կարող է որոշիչ դեր ունենալ ձեռնարկատիրական կարիերայի ընտրության հարցում: Սեփական ձեռնարկությունը ստեղծելու համար, բացի ցանկությունից և աջակցությունից, չափազանց կարևոր է նաև ունենալ համապատասխան տեսական և գործնական պատրաստվածություն, ինչպես նաև սկզբնական կապիտալ կամ այն ձեռք բերելու հնարավորություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 2:
2. Մելքումյան Մ. «Ձեռնարկատիրություն և ներդրումներ: Արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Երևան, «Լույս», 1998թ., էջ10:
3. «Ձեռներեցի սեղանի գիրք» խմբ. խորհուրդ Հ.Ղուլչյան, Գ. Կիրակոսյան, Ա.Մարկոսյան, Երևան, «Տնտեսագետ», 1999թ., էջ 18:
4. Хизрич Р., Питерс М., Предпринимательство, Москва , 1991г., стр. 20
5. Багиев Г. Л., Асаул А. Н. ,Организация предпринимательской деятельности, Учебное пособие/ Под общей ред. проф. Г. Л. Багиева

-
6. Лапуста М., Предпринимательство, ИНФРА-М, 2004 г., стр. 6-7
 7. Предпринимательство в конце XX века, Под ред. А. А. Дынкина, А. Р. Стерлина, Москва, Наука, 1992г., стр. 34
 8. Шумпетер Й., Теория экономического развития, Москва, 1982г., стр. 184-194, 211-225.
 9. Хизрич Р., Питерс М., Предпринимательство, или Как завести собственное дело и добиться успеха, Москва, 1991г., стр. 11-50
 10. Бусыгин А., Предпринимательство, ИНФРА, М., 1997, стр 15
 11. Круглова Н.Ю., Основы бизнеса, Москва, 2003г., стр. 53
 12. Robert Hisrich, Entrepreneurship and Intrapreneurship: Methods for Creating New Companies That Have an Impact on the Economic Renaissance of an Area. - In: Entrepreneurship, Intrapreneurship and Venture Capital, ed. Robert D. Hisrich, Lexington, Mass., Lexington Books, 1986, p. 96.
 13. Richard T. Ely, Ralph H. Hess. Outlines of Economics, 6th ed. New York, Macmillan, 1937, p. 488.
 14. Joseph Shumpeter. Can Capitalism survive? New York, Harper & Row, 1952, p. 72.
 15. Peter F. Drucker, "Innovation and Entrepreneurship", 2006
 16. Karl Vesper. New Venture Strategies. Englewood Cliffs, N. J., Prentice-Hall, 1980, p. 2.
 17. Robert C. Ronstadt. Entrepreneurship. Dover, Mass., Lord Publishing Co., 1984, p. 28
 18. Robert D. Hisrich, ed. Entrepreneurship, Intrapreneurship, and Venture Capital: The Foundation of Economic Renaissance. Lexington, Mass., Lexington Books, 1986.
 19. R. D. Hisrich. Entrepreneurship and Intrapreneurship: Methods for Creating New Companies That Have an Impact on the Economic Renaissance of an Area. - In: Entrepreneurship, Intrapreneurship and Venture Capital, ed. R. D. Hisrich, Lexington, Mass., Lexington Books, 1986, p. 90.

HISTORICAL DEVELOPMENT OF ENTREPRENEURSHIP AND REASONS TO BECOME AN ENTREPRENEUR

GEVORGYAN KORYUN

GSU Lecturer

Faculty of Management and Finance, PhD student

e-mail: kor.gevorgyan@gmail.com

An important component of a market economy in the modern world is entrepreneurship, especially small and medium-sized, due to its socio-economic importance.

Even though entrepreneurship entered a new stage of development only in the 21st century, there are many references to entrepreneurship and the entrepreneur in the scientific works of several famous economists of the 18th and 19th centuries, and the provisions formulated by them have not lost their relevance today.

The essence of entrepreneurship is to promote the development of an open economy, increase the import and export of capital. Entrepreneurship creates a coordination mechanism, develops a market development strategy, and establishes communication between enterprises. The main feature of entrepreneurship is the independence of the company or business entities.

The main task of the enterprise is to manage the enterprise, subject to the rational use of resources and the organization of the production process. The essence of entrepreneurship can also be determined by the fact that each entrepreneur is responsible for the final results of his activities. The development and improvement of one's own business is the initial condition for achieving economic success and high rates of production growth.

The life of a person who decides to start his own business is full of hopes, disappointments, worries and hard work. The creation of any enterprise is preceded by the decision-making process to radically change one's lifestyle or become an entrepreneur. Each such decision is made considering the competitive situation and each has its own characteristics. However, there are also common features, for example, the transition from one point to another; in other words, the abandonment of the usual way of life in favor of starting one's own business.

Key words: *Entrepreneurship, small to medium enterprise (SME), entrepreneur, creation of a new enterprise, becoming an entrepreneur, decision-making.*

ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ И МОТИВЫ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

ГЕВОРКЯН КОРЮН

Преподаватель ГГУ,

Аспирант кафедры менеджмента и финансов

электронная почта: kor.gevorgyan@gmail.com

Важной составляющей рыночной экономики в современном мире является предпринимательство, особенно малое и среднее, что обусловлено его социально-экономической значимостью.

Несмотря на то, что предпринимательство вступило в новую стадию развития только в 21 веке, существует множество упоминаний о предпринимательстве и предпринимателе в научных работах ряда известных экономистов 18 и 19 веков, и сформулированные ими положения не утратили своей актуальности и в наши дни.

Суть предпринимательства состоит в том, чтобы способствовать развитию открытой экономики, увеличению импорта и экспорта капитала. Предпринимательство создает механизм координации, разрабатывает стратегию развития рынка и налаживает связь между предприятиями. Главный признак предпринимательства - независимость компании или хозяйствующих субъектов.

Основная задача предприятия - управление предприятием, при условии рационального использования ресурсов и организации производственного процесса. Сущность предпринимательства также может определяться тем, что каждый предприниматель несет ответственность за конечные результаты своей деятельности. Развитие и совершенствование собственного бизнеса является первоначальным условием достижения экономического успеха и высоких темпов роста производства.

Жизнь человека, решившего открыть собственное дело, полна надежд, разочарований, забот и упорного труда. Созданию любого предприятия предшествует процесс принятия решения кардинально изменить свой образ жизни или стать предпринимателем. Каждое такое решение принимается с учетом конкурентной ситуации и каждое имеет свои особенности. Однако есть и

общие черты, например, переход от одной точки к другой; другими словами, отказ от привычного образа жизни в пользу создания собственного дела.

Ключевые слова: *Предпринимательство, малое и среднее предприятие (МСП), предприниматель, создание нового предприятия, принятие решения стать предпринимателем.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 16.10.2021թ.: